

---

# Մամլո հաղորդագրություն

---

**ՀԲԸՄ-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

5 Օգոստոս 2021

**Ենթակա է անհապաղ հրապարակման**

Հայկական բարեգործական ընդհանուր միությունն իր շնորհավորանքներն է հայտնում Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին և իր թիմին նոր կառավարության ձևավորման կապակցությամբ: Սա ինքնին դրական ձեռքբերում է՝ հաշվի առնելով երկրի ներքաղաքական անկայունությունը և տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական լրջագույն մարտահրավերները:

Հայկական սփյուռքը Հայաստանի ապագայով մտահոգ բարեկամ ժողովուրդների հետ միասին ողջունում է ընտրությունների միջոցով երկրում բնականոն կյանքի աստիճանական վերադարձը: Սա կարևոր նախապայման է հյուժիչ պատերազմից և ներքաղաքական լարվածությունից հետո վերականգնվելու և հարյուրավոր հայ ռազմագերիներին տուն վերադարձնելու աշխատանքները շարունակելու համար:

Թեև Հայաստանի ժողովուրդն իր քվեարկությամբ կողմ է արտահայտվել կայունությանը և խաղաղությանը, Հայաստանի նոր կառավարությունը ստիպված է լինելու առերեսվել հետպատերազմյան դժվարությունների ու ազգային անվտանգության սպառնալիքների հետ՝ պայմանավորված Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական իրավիճակով:

Մենք հուսով ենք, որ այս պայմաններում ձայների մեծամասնությունը ստացած վարչապետն ու իր կառավարությունը վճռական կգտնվեն երկրի զարգացման ճանապարհին տեղական և միջազգային լավագույն մասնագետներին ընդգրկելու գործում: Իրապես, այսօր Հայաստանի և Արցախի ինքնիշխանությունն ու անվտանգությունը մեծապես կախված են առաջիկա ամիսներին և տարիներին կայացրած կարճաժամկետ որոշումներից և երկարաժամկետ հանձնառությունից:

Այս առումով, Սփյուռքի համայնքների, քաղաքացիական հասարակության, եկեղեցու ու այլ կառույցների մասնակցությունը և համախմբումն ամուր հիմք կլինեն գալիք դրական փոփոխությունների համար:

Այս նպատակին հասնելու համար մենք ակնկալում ենք, որ Հայրենիք-Միությունը համագործակցության, համատեղ աշխատանքի և երկխոսության համար կստեղծվեն ավելի հստակ և անմիջական մեխանիզմներ՝ հնարավորություն տալով օտար երկրներում ապրող Հայաստանի քաղաքացիներին նշանակվել պետական բարձր պաշտոններում (ինչը ենթակա է խորհրդարանի հաստատմանը): Օրինակ՝ Հայաստանում մեկ տարվա մշտական բնակությունը կարող է նվազագույն անհրաժեշտ շեմ լինել պետական պաշտոններում նրանց նշանակման համար:

Ցավալիորեն, այսօր Հայաստանը բախվել է մոտալուտ ժողովրդագրական աղետի: 44-օրյա պատերազմը և արտագաղթի ահագնացող տեմպերը ևս մեկ հարված էին մեր Հայրենիքի ժողովրդագրական վատթար վիճակին, ինչի հաղթահարման համար անհրաժեշտ են համապարփակ քայլեր՝ ապահովելու Հայաստանի ժողովրդագրական կենսունակությունը:

Այսօր, առավել քան երբևէ, Հայաստանը պետք է հավատարիմ մնա ժողովրդավարական չափանիշներին և մարդու իրավունքների պաշտպանությանը, ապահովի դատական համակարգի անաչառությունը, պաշտպանի սեփականության իրավունքն ու իրականացնի թափանցիկ ու ազատ տնտեսական քաղաքականություն:

Միևնույն ժամանակ, հարկավոր է ներդնել ավելի արդյունավետ կարգավորումներ տնտեսության մեջ՝ հակազդելու ազգային անվտանգության այն սպառնալիքներին, որոնք սերում են ներկայիս տնտեսական վարչարարությունից: Առաջին քայլերից կարող է լինել քաղաքացիություն չունեցող անձանց կողմից հողի սեփականության իրավունքի սահմանափակումները:

Մենք նաև հուսով ենք, որ Հայաստանը կշարունակի իրականացնել հայկական քաղաքակրթության պահպանման սրբազան առաքելությունը՝ զուգահեռ պաշտպանելով ու զարգացնելով հայկական ինքնության հիմնասյունները՝ լեզուն, մշակույթը, կրթությունը և եկեղեցին:

ՀԲԸՄ-ն պատրաստ է իր ողջ կարողությունները ծառայեցնել այս նպատակներին հասնելու համար: Մենք կշարունակենք մեր առաքելությունը՝ օգնելով վերակառուցել ավելի անվտանգ և ծաղկուն ապագա: Մենք շարունակում ենք հանձնառու մնալ հավաքագրելու ՀԲԸՄ աշխարհասփյուռ անդամներին և բոլոր հնարավորությունները՝ օգնելով իրացնելու այն ներուժը, որը առկա է յուրաքանչյուր հայ մարդու մեջ՝ պետական ծառայողներից և գործարարներից մինչև երիտասարդներ և հասարակության այլ անդամներ:

*Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) սփյուռքի հնագույն, համաժողովրդական և համահայկական կազմակերպությունն է: Հիմնված լինելով 1906 թվականին՝ ՀԲԸՄ-ի գլխամասային գրասենյակը գտնվում է Նյու Յորքում: ՀԲԸՄ-ը կրթական, մշակութային և մարդասիրական ծրագրերի միջոցով պահպանում և զարգացնում է հայկական ինքնությունն ու ժառանգությունը՝ յուրաքանչյուր տարի ազդեցություն ունենալով աշխարհով մեկ սփռված շուրջ 500,000 հայերի կյանքի վրա:*

*ՀԲԸՄ-ի և իր աշխարհասփյուռ ծրագրերի մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար  
կարող եք այցելել՝ [www.agbu.org](http://www.agbu.org):*

---

**Լրատվական հարցումների համար դիմել՝**

ՀԲԸՄ մամուլի գրասենյակ

55 East 59-րդ փողոց

Նյու Յորք, NY 10022-1112

Հեռախոս՝ 212.319.6383

Էլ. փոստ՝ [communications@agbu.org](mailto:communications@agbu.org)